



Ն Ի Խ Թ Ե Ր

ԱՂԱՌԱՆԻՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ.

ԴՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ

Ն Ո Ր Գ Ա Ր Ո Ւ Ն.

Քեզ ըսպատող չըմբնաց,
Ո՛ր ես գալիս այ գարուն.
Գովքըդ ասող չըմբնաց,
Զուր ես գալիս այ գարուն:

Սեւ-մութ պատեց աշխարհին,
Սաք ու ծոր դառան արին,
Մեզ վայ քերեց էս տարին—
Ո՛ր ես գալիս այ գարուն:

Բիւքիւղդ գայ՝ թող ձէն տայ,
Էլ ո՛վ պիտի քեզ խնդայ,
Էլ ո՛ր սիրտը կը թնդայ—
Զուր ես գալիս այ գարուն:

Բիւքիւղն էկա՛ւ վարդ չունի,
Ժողկոցը կայ՝ զարդ չունի.
Էլ ո՛վ ա որ դարդ չունի—
Ո՛ր ես գալիս այ գարուն:

Դու ետ քերի՛ր հաւքերին,
Ո՛նց տէր ընեն ըններին.
Սա՛ղ տեղ չկայ մեր երկրին—
Զուր ես գալիս այ գարուն:

Աշուղի քերանը փակ,
Սազ—քեամանչէն փակի տակ,
Սիրտն ա էրուում անկրակ—
Ո՛ր ես գալիս այ գարուն:

Քեզ ըսպատող չըմբնաց,
Զուր ես գալիս այ գարուն.
Գովքըդ ասող չըմբնաց—
Ո՛ր ես գալիս այ գարուն:

Մ. Կաղանկատուացու Աղոսանից պատմութեան ընագրի վերայ եղած փոփոխութիւնները.

Այնչեպ 1895 և 1896 թ.ներին Արաւրատի մէջ մի շարք յօդուածներով մենք նկարագրեցինք Կաղանկատուացու պատմութեան 5 ձեռագիրները, ցոյց տալով որ նոցանից միայն հետեւեալ 3-ը հիմնական են.

Ա. Երկաթագիր օրինակ Մայր Աթոռիս մատենադարանի № 1682, զրուած փրկչական 1289 թուին: Այս ձեռագրից են ծագում բոլոր այն նորագոյն ընդօրինակութիւնները, որոնցից կատարուել են Պարիզի և Մոսկուայի հրատարակութիւնները:

Բ. Բոլորագիր ձեռագիր Մայր Աթոռիս մատեն. № 633 (Գէորգ. ցուց.), փրկչական 1664 թուից:

Գ. Նօտարագիր անթուական, Մայր Աթոռիս մատ. № 1721:

Բ. և Գ. ձեռագիրները, ինչպէս նաև Հ. Ալիշանի ձեռքում գտնուած մի օրինակ, որից օգտուել է նա իւր Սիսականում, պատկանում են մի խմբի, որ մենք անուանել ենք երկրորդ խումբ. իսկ առաջին խումբը միայն մի օրինակ է, այն է՝ երկաթագիրը:

Այստեղ մենք յառաջ ենք բերում այն հատուածները, որոնք եղծուած են երկաթագիր օրինակում և այդպէս ընդօրինակուած Ա. խմբին պատկանող ձեռագիր և տպագիր օրինակների մէջ, որոնց նախնական իմաստը վերականգնել կարելի է սակայն, հետեւելով Բ. խմբին պատկանող ձեռագիր օրինակներին:

Բ. ԽՈՒՄԲ.

I

«Ոչ թէ ի հարկէ ինչ, կամ թէ աւագ դոլ զհայս քան զաղուանս հաշուեցան, այլ սակս մեծաքանչ զօրութեանն, որ կատարեցաւ ի հայք՝ կամ եղև սոցա կամաւ հնազանդիլ արժանաժառանգ զարմին սրբոյն Գրիգորի, կոչեցին և հաճեցան»։¹

Շօտրագիր օրինակում՝ տողամէջ շղաղիւր գրչութեամբ աւելացրած է հետեւեալ ծանօթութիւնը. «Այսքանս զոր ղնգնաձեւեցաք սուտ էր եւ յետոյ ներմուծեալ ի սնապարծից յօգուտ անձանց, զի ի յայլս պատմութիւնս ոչ գոյ բնաւ։ Թուի թէ յԱնանիայ կաթողիկոսէն յետոյ այսպէս արարին Աղուանից սեազութիւն»։

Այս ծանօթութեան գրչութիւնը բոլորովին նման է Սիմէօն կաթողիկոսի ձեռագրերին, ինչպէս այդ երևում է ակներև «Ջամբուի» ձեռագրի սեազիր տետրերից (տես. կաթ. Դիւանի թղթերում)։ Նոյն միտքն է յայտնում Սիմ. կաթողիկոսը և իւր յիշատակարանում (Տես. Դիւան Հայոց Պատմութեան. Սիմ. կաթողիկոսի յիշատակարանը 94 թ. երես 339)։ «Դսկ որ յաղուանիցն միայն պատմութեան և այն ևս ի յոմանս զաղափարըս և ոչ ի բնաւսն՝ գտանի գրեցեալ թէ՛ յետ Եղիշէի նստան ևս աթոռակալք նմին մինչև ի սուրբն Գրիգոր, սուտ է, եւ յետոյ մուծեալ»։

II

«Շոյնպէս և վասն ձեռնադրութեան կաթողիկոսութեան մերոյ, նախկին յԵրուսաղէմէ ընկալան, մինչեւ ցտորքն Գրիգորիս, եւ անտի ցայժմ՝ յակախոպոսաց մերոց առնուին»։

Դսկ այժմ զի անփորձ և անընտրող գործովք եղև, և հերձուածեցաւ աշխարհս, վասն այդորիկ պայմանեցաք առաջի Աստուծոյ և ձերոյ հայրութեանդ (կամ հայրապետութեանդ) թէ ձեռնադրութիւն հայրապետութեանս Աղուանից, ի սուրբ Գրիգորի աթոռոյն լիցի միաբանութեամբ աշխարհիս։

Ա. ԽՈՒՄԲ. (Երկաթագիր)

I

Ջի Ուսնայր արքայն մեր խնդրեաց ի սրբոյն Գրիգորաւ նորին սուրբ ձեռնադրութեամբն լինիլ եպիսկոպոս աշխարհին իւրոյ։ Որք և այսու կանոնիւ կացին աշխարհս Հայոց և Աղուանից համակամ եղբայրութեամբ և անքակ ուխտիւ մինչև ցայսաւր»։¹

Նախնական բնագիրը երկաթագիր օրինակում քերուած է և այսպէս փոփոխուած։ Քերուած երեսը բաց գեղին զոյնով ներկած է, թերևս եղծուածը ծածկելու նպատակով։ Եւրք քերուած թուղթը լոյսի առաջ բռնում եւ՝ ակներև երևում է քերուածքի ծակոտած տեղերը և կարդացուում է նախնականը։ Քերուածքը ինքն ըստ ինքեան ապացուցանում է, որ սկզբում նման է եղել նախնական օրինակին, եթէ ոչ՝ ինչ հարկ կար այնքան նեղութիւն կրել, քերել նորից գրել գեղին զոյնով ներկել ևլն։

II

«Շոյնպէս վասն ձեռնադրութեան կաթողիկոսաց Աղուանից այսպէս կանոնեցաք. քանզի ի սուտ ինչ ժամանակս կաթողիկոսքն մեր զկարգն յեպիսկոպոսացս մերոց առին։ Դսկ այժմ զի անփորձ և անընտրող գործովք եղև, և հերձուածեցաւ աշխարհս, վասն այդորիկ պայմանեցաք առաջի Աստուծոյ և ձերոյ հայրութեանդ, եթե ձեռնադրութիւն հայրապետութեանս Աղուանից ի սուրբ Գրիգորի աթոռէն լիցի միաբանութեամբ աշխարհիս։

Բ. ԽՈՒՄԲ.

Ա. ԽՈՒՄԲ.

Եւ Հայոց աթոռոյն ձեռնադրութիւն Արդասնից աթոռակալէն լիցի՝ զի այս երիցագոյն է քան զՀայոցդ։

Եւ յայսմ պայմանէ մի լիցի իշխանութիւն ումէք արտաքոյ ելանել՝ և այլաձևս ինչ առնել։ Ապա թէ ոչ անուէր (անվաւեր) և ունայն լիցի և մի հաստատեսցի (կամ հաճեսցի) ձեռնադրութիւնն երկաքանչիւրոցն։¹

Ծօտրադրում ընդգծած բառերը սև մեղանով ջնջած են։ Ենթադրեալ բառի վերայ շղագրով գրած է «Եղիշայ»։ Իսկ ընկալան բառի գիմաց՝ լուսանցքում, դրուած է հետեւեալ ծանօթութիւնը։ «Եւ յետոյ ի սարքոյն Գրիգորէ եւ ապա ի սուղ ժամանակս»։ միջի ընդգծուած տողերի մէջ, շղագրով գրածն է. «Թուի թէ յետ Անանիա կաթուղիկոսին արարին այսպէս. զի սուտ է և այսքանս, զի յայլ պատմագիրս ոչ է այսպէս, որպէս տեսանիս ի Սիւնեացն և յայլ պատմագիրս»։ «Երկաքանչիւրոցն» բառը նօտրում ջնջած է և շինած «երկրիս մերոյ»։ Այս նոյնպէս Սիմէօն կաթուղիկոսի ձեռքն է։

III

Բ. «Սուրբն Շուփաղիշոյ կաթուղիկոս յարեւիաց յերուսաղէմէ եկեալ։

Գ. Տէր Մաթէ։

Դ. Տէր Սահակ։

Ե. Տէր Մովսէս։

Զ. Տէր Պանդ։

Է. Տէր Ղազար։

Այս չէ յայտ թէ որք են յայս միջոցս մինչև ցուրբն Գրիգորիս։

Ը. Տէր սուրբն Գրիգորիս Արշակունեաց ի Պաշտօնիկն Գրիգորոյ Հայոց Լուսաւորչէն երկատեսակ փառօք կացեալ ի նոյն Աթոռ։²

Ծօտրագիր օրինակում շղագրով գրած է. «Ապա սուրբն Գրիգորիս թոռն մեծին Գրիգորի Լուսաւորչին Հայոց»։ «այս է ստոյգն»։ Նոյնպէս «Շուփաղիս այս ի ժամանակս բարեպաշտին Վաչականին է» տես ի պատմութիւնդ։ «Այս սուտ է»։—Այս ևս Սիմէօն կաթուղիկոսի ձեռքն է։

Որպէս եւ էրն ի սրբոյն Գրիգորա անտի, զի անդ ընկալաք զլուսաւորութիւն եւ ճշմարտութեամբ զհոսմք թէ զոր դուք ընտրէք հաճոյ Աստուծոյ է եւ մեզ։

Եւ այսմ պայմանի մի լիցի իշխանութիւն ումէք արտաքոյ ելանել եւ այլաձևս ինչ առնել, ապա եթե ոչ անուէր (=անվաւեր) եւ ունայն լիցի եւ մի համարեսցի ձեռնադրութիւնն այն ընդունելիս։¹

Երկաթագիր օրինակում ընդգծուած տողերը նոր գրչութեամբ են գրուած քերուած տեղերում։

Սոյն երեսի քերուածքը համեմատելով առաջին քերուածքի հետ՝ տեսնում ենք, որ այստեղ ամենակոպիտ կերպով է կատարուել գործողութիւնը, այնպէս որ ամեն մի ձեռագիրը ձեռքն առնողը կարող է նկատել թէ այս ինչու համար է քերուած. բայց մինչև Բ. խմբի մի ձեռագիր ձեռքի տակ չունենայ չէ կարող իմանալ պատճառը։

III

«Սուրբն Գրիգորիս Պաշտօնիկ թոռն մեծին Գրիգորոյ Հայոց Լուսաւորչին երկատեսակ փառօք կացեալ ի նոյն Աթոռ։

Սուրբն Շուփաղիշոյ։

Տէր Մատթէոս։

Տէր Սահակ։

Տէր Մօսէս։

Տէր Պանտ։

Տէր Ղազար։

Տէր Գրիգոր։²

Երկաթագիր օրինակում ընդգծուած տողերը շատ կոպիտ կերպով քերուած են և տեղը գրուած խոշոր բոլորագրով ու ներկած։

1. Երկաթագիր, էջ 559 ք. Տպ. Պարիզ, հատոր Բ. երես 22—25. Մոսկվա, եր. 242։

2. Տես. երկաթ. էջ 575 ք.

* Տպ. Պարիզ, հատոր Բ. երես 71 72. Մոսկվա, երես 274—275։

1. Տես. Բոյոր, էջ. 205. Նօտք. 245։

2. Տես. Բոյ. 255, 254. Նօտք. 275, 276։

Արդէն երկու խմբի համեմատութիւնից պարզ երեւում է, որ եղծուածները կատարուել են Հայոց և Աղուանից ակթոռների գահական իրաւունքների վերաբերեալ կէտերում իսկ թէ երբ է կատարուել այս եղծումը, այս մասին մի քանի խօսք:—Ինչպէս տեսանք Աղուանից պատմութեան՝ մինչև ցայսօր յայտնի օրինակների մէջ հնագոյնն է երկաթագիր օրինակը, գրուած Հայոց ՉԼԸ=1289 փրկչական թուականին, նորաւ ս. Յովհաննու վանքում: Այս օրինակը ՌԾԻԾ=1676 թուականին նորոգուել է Զաքարիա սարկաւազ պատմագրի ձեռքով: Երկաթագիր պակաս թերթերի տեղ Զաքարիան լրացրել է բոլորագիր գրութեամբ: Զաքարիայի ձեռքով նորոգած թերթերը (ձեռագիր 351, 352, 362, 374—377) համապատասխանում են Պարիզի տպագրութեան հատոր I, երես 413—424, հատոր II երես 29—33 և 63—76, և Մոսկվայի տպ. 219-22, 246-249 և 269-278 երեսներին: Մեր բերած հատուածներից I և II-ը երկաթագիր 236ա և 359ը երեսներում են գտնուում: Իսկ III-ը գտնուում է Զաքարիայի նորոգած բոլորագիր 375ը. երեսում: Ուրեմն քերուել է ոչ միայն երկաթագիրը, այլ և Զաքարիայի բոլորագիր նորոգութիւնը: Հետեւաբար եղծումը կատարուել է 1676 թուականից, այն է Զաքարիայի նորոգութիւնից յետոյ: Այս ևս ապացուցուում է, որ առաջին խմբի եղծուածների նախկին խմբագրութիւնը ըստ ամենայնի նման է երկրորդ խմբի աւանդածին. մեծաւ մասամբ խոշորացուցով կարելի է վերականգնել նախնականը: Բայց ո՞ւմ ձեռքով է կատարուել՝ այս մասին այսչափ:—Հայոց ՌՄԺ=1761 թուականին՝ Յակոբ Շամախեցի կաթողիկոսը խիստ փափազանօք որոնում է մի ընտիր օրինակ Աղ. Պատմութիւն ձեռք բերելու, որպէս զի ընդօրինակել տայ իւր յիշատակի համար: Եայտնուում է որ նորա Յովհաննու վանքում պահուում է մի ընտիր օրինակ յիշեալ պատմութեան: Նախկին կաթողիկոսի հրա-

մանով բերուում է այն ընդմիածին և յանձնուում է Ղուենկիանոս դպրին ընդօրինակելու: Ղուենկիանոսը ընդօրինակելիս զանազան սրբագրութիւններ է արել, երբեմն մի բան աւելցնելով, երբեմն էլ դուրս ձգելով՝ պակասեցնելով: Ղուենկիանոսի այս սովորութեան մասին ապացոյցներ շատ ունինք ձեռքի տակ, թէ Աղուանից պատմութեան մէջ և թէ այլ ձեռագրերում: Ղուենկիանոսը յաւելուածներ է արել և Ղազար Փարպեցու մէջ, ինչպէս յայտնում է մեզ այս մասին Մայր Աթոռիս բազմաշխատ միաբան Տ. Գալուստ Տէր Մկրտչեանը:

ԴՄ. Վ.

ՄԱՏԵՆԱԽՍՍՈՒԹԻՒՆ.

ԱԴԻՆԱՅԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ. «Թագաւոր ի տանէ Դաւթի». Պրոֆ. Դ. Հ. Ինգրայամ:—Թարգմ. ռուսերէնից Յովսէփ քահ. Տէր Պետրոսեանց. Թիֆլիս 1897:—Այս գիրքն առանձին ուշագրութեան արժանի է այն պատճառաւ, որ նորա բովանդակութիւն կազմող նիւթը շատ քիչ է արծարծուում դժբաղդաբար մեր գրականութեան մէջ և գրեթէ անմատչելի է հասարակութեան մի ստուար մասի համար: Զրիստոսի ժամանակակից մի Աղեքսանդրացի հարուստ հրէի երիտասարդ աղջիկ է ներկայացրած այստեղ, որ իւր ազգային—կրօնական կրթութիւնը կատարելագործելու համար Երուսաղէմ ուղարկուելով, նամակներ է գրում այնտեղից հօրը և յայտնում իւր տըպաւորութիւնները: Այսպէս՝ վիպական, հետաքրքրելի, զիւրմբունելի ոճով մէջ է բերուած աւետարանի ամբողջ պատմութիւնը, որչափ մեզ հասած աղբիւրները թոյլ են տալիս հեղինակին երեւակայելու, թէ մի ժամանակակից լսած և ըմբռնած կարող էր լինել այն:—Ձեռքի տակ չունենալով այս գրքի ոչ անգլիերէն բնագիրն և ոչ ռուսերէն օրինակը, մենք չենք կարող քննել, թէ որչափ ճշգրութեամբ է կատարուած հայերէն թարգմանու-